# ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ԱՐՄԱՆ ԲԱՀԱՏՈՒՐՅԱՆԻՆ «Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱԶԱՏ ԶԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ԱՐՄԱՆ ՊԱՀԱՏՈՒՐԵԱՆ, ՈՐ Ի ԼԻՈՆ, ՖՐԱՆՍԻԱ

Համազգային մեր հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ու բարեմաղթանքներն ենք յղում Ձեզ՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու արժանաւոր զաւակիդ:

Գոհունակութիւն է Մեզ համար տեղեկանալ Կենտրոնական Եւրոպայի Հայրապետական Պատուիրակ Գերաշնորհ Տ. Գիւտ արքեպիսկոպոս Նազգաշեանից, որ Դուք բազում փարիներ, զօրացած Բարձրեալի ամենախնամ օրհնութեամբ, որդիական պատրաստակամութեամբ Ձեր ծառայութիւնն էք բերում Մայր Եկեղեցու սրբազան առաքելութեան իրականացմանը՝ օրինակ ունենալով սիրեցեալ Ձեր ծնողներին՝ ազգային բարերարներ Տէր եւ Տիկին Ճիպրայէլ եւ Ազատուհի Պահապուրեաններին: Ցիրաւի, աստուածահաճոյ կեանք ապրեցին Ձեր ծնողները, բազում բարի իրագործումներով ծառայեցին աստուածասէր մեր ժողովրդին եւ այսօր երկնքում վստահաբար ուրախ են իրենց հոգիները, որ Պահապուրեան ընտանիքի բարի աւանդները ծաղկում ու արգասաւորւում են Ձեր գործերով:

Ցապկապէս գովելի եւ արդիւնաշատ է Ձեր վաստակը Լիոնի շրջանի հայութեան կեանքում: Ֆրանսիա կատարած հովուապետական Մեր այցի ընթացքին Մենք ուրախութեամբ ականատես եղանք, որ Ձեզ պէս հայորդիների քաջեռանդ ջանքերով եւ հոգեւոր դասի ծառայութեամբ Լիոնի շրջանում աշխոյժ է հայ կեանքը եւ զօրաւոր՝ հայորդեաց որդիական սէրն ու նուիրումը հանդէպ Մայր Եկեղեցին եւ լուսոյ խորան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը:

Ուրախ ենք նշելու, որ ազնիւ հոգով եւ սրտաբուխ նուիրատուութիւններով Դուք Ձեր ծառայութիւնն էք բերել նաեւ Մայր Աթոռ Սուրբ էջմիածնի շինութեանն ու պայծառութեանը՝ արժանանալով Երջանկայիշատակ Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրական օրհնութեանը:

Յարգարժան պրն Պախպուրեան, բարձր գնահատելով Ձեր ծառայութիւնները մեր Եկեղեցուն, սիրով ընդառաջում ենք Գերաշնորհ Տ. Գիսպ արքեպիսկոպոս Նազգաշեանի ազնիւ խնդրանքին եւ Հայրապետական այսու Կոնդակով շնորհում Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

## ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Ի խորոց սրտի աղօթքով Բարձրեալն Աստուծոյ օրհնութիւնն ու օգնականութիւնն ենք հայցում Ձեզ եւ մաղթում, որ Տէրը հաստատ մեր հայր Սուրբ Գրիգոր Լուսաւորչի բարեխօսութեամբ պարգեւի Ձեզ քաջառողջ արեւշատութիւն եւ եկեղեցաշէն գործերի յաջողութիւններ:

Թող Բարին Աստուած Իր սիրոյ ու խնամքի մէջ պահի մեր Սուրբ Եկեղեցին, հանապազ օրհնի եւ Իր բազում պարգեւներով առատապէս շնորհազարդի մեր Եկեղեցու բոլոր բարեսպաշտ հաւատացեալներին:

*Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:*

Օրհնութեամբ՝

**ԳԱՐԵԳԻՆ Բ**
**ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

**Տուաւ Կոնդակս ի 25-ն Դեկտեմբերի**
**յամի Տեառն 2003 եւ ի թուին հայոց ՌՆԾԲ**
**ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի**
**ընդ համարաւ 214**